

**BSC**-ն ներկայացվելու է "DigiTec անիվների վրա" արտագնա ցուցահանդես-տոնավաճառում.

Դեկտեմբերի 21-25-ը՝ Չարենցավան, Հրազդան, Սևան, Դիլիջան, Իջևան քաղաքներում

**Նոր միջոցառում՝ “DigiTec անիվների վրա”**



“DigiTec անիվների վրա” արտագնա ցուցահանդես-տոնավաճառ մեր նոր միջոցառումն է: Այն նախաձեռնել են Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը (ԻՏՁՄ) և Տարածքային կառավարման նախարարությունը՝ մի շարք Տեղեկատվական և Հաղորդակցական Տեխնոլոգիաների ընկերությունների մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում Տեղեկատվական և Հեռահաղորդակցական Տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով: “DigiTec անիվների վրա” արտագնա ցուցահանդես-տոնավաճառը արտագնա միջոցառում է, որի շրջանակներում մասնակից ընկերությունները կշրջեն Հայաստանի Հանրապետության մարզային 42 քաղաքներում՝ կայանելով և ցուցադրվելով յուրաքանչյուրում մեկական աշխատանքային օր: Միջոցառումը կունենա ցուցահանդեսային, ուսուցողական և զվարճանքի բաղադրիչներ:

### **Նպատակները**

“DigiTec անիվների վրա” արտագնա ցուցահանդես-տոնավաճառն ուղղված է.

- մարզերում ՏՀՏ ընկերությունների ապրանքների և ծառայությունների սպառման խթանմանը
- ՏՀՏ շուկայի ընդլայնմանը
- մարզային համայնքների համար ՏՀՏ ապրանքների և ծառայությունների հասանելիության և մատչելիության մեծացմանը
- մարզային համայնքներում ՏՀՏ տարածման խթանմանը
- տեղեկատվական հասարակության կայացմանը

### **Ակնկալվող այցելուն**

- Ուսանողներ
- Դպրոցականներ
- Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների
- Հիմնարկությունների աշխատակիցներ
- Կրթական հաստատությունների աշխատակիցներ
- Տեղական կառավարման մարմիններ
- Գործարարներ

### **Ընկերությունների համար ակնկալվող շահեր**

- տեղում վաճառքի իրականացում
- մուտք տեղական շուկա
- ընկերության անվան ճանաչման ընդլայնում
- սեփական ապրանքների և ծառայությունների սպառման ընդլայնում
- տեղական կառավարման և գործարար մարմինների հետ բիզնես շփման և համագործակցության հնարավորություն
- ապագա կադրերի ընտրություն/ուսուցանում
- տեղական ներկայացուցչություններ հիմնելու հեռանկար
- տեղական շուկայի կոնյուկտուրան ճանաչելու նպատակով տեղում հարցման/հետազոտության անցկացման հնարավորություն
- առաջարկվող ծրագրերի/մատուցվող ծառայությունների ներկայացում, ժողովրդականության ընդլայնում
- լիցենզավորված ծրագրերի վաճառքի խթանում ոչ արտոնագրվածի փոխարեն ուսուցողական դասընթացների, ներկայացումների, վարժանքների, սեմինարների անցկացում